ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.01.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Լ. Հովհաննեիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն» ՓԲԸ-ի «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.01.2022թ.-ին:

11.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/02 համարի ծածկագիրը:

18.01.2022թ.-ին, 04.02.2022թ.-ին և 10.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.02.2022թ.-ին:

2. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն 11.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ն <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման մասին (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 93 չափաբաժիններից «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է թիվ 65-րդ չափաբաժինը (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները):

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի <<անվանումը>> սյունակում թիվ 65-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի համար գրված է «Անգիոգրաֆիկ ստենտավորման» անվանումը, որի «տեխնիկական բնութագիրը» սյունակում ներառված պահանջներում առկա է նաև «մեդֆյատոր» անվանումով ապրանքի առկայությունը, այն դեպքում, երբ այդ անվանումով ապրանքը հանդիսանում է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկա և որպես

այդպիսին պահանջվում է Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները):

«Խաչպար» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն» ՓԲԸ-ի «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Լ. Հովհանեիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն» ՓԲԸ-ի «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի երկրորդ մասի «2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»:

<<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդված երկրորդ մասով սահմանված պահանջների խախտում Հրավերի թիվ 65-րդ չավլաբաժնի մասով, քանի որ տվյալ չափաբաժնով պահանջվող «Աեգիոգրաֆիկ ստենտավորման» անվանումը ունեցող ապրանքի տեխնիկական բնութագրերում Պատվիրատուն խմբավորել է նաև «մեդֆլյատոր» անվանումով ապրանքը, որը հանդիսանում է առանձին բնութագրեր ունեցող գնմանա առարկա, և որպես այդպիսին պահանջվում է Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Լ. Հովհանեիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն» ՓԲԸ-ի «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում չկայացած հայտարարելու

գնման ընթացակարգը «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը 24.01.2022թ.-ին ի լրումն ներկայացված բողոքի հայտնել է հետևյալը.

«Ի լրումն <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<ԳԲՔԱ-ԷՕ-2022/02>> բողոքի և ի պաասխան <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից 20.01.2022թ. Ձեզ առաքված թիվ 21 գրության հայտնում եմ հետևյալը՝

Գրությունով Պատվիրատուն ինքն է փաստում և հաստատում, որ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<Անգիոգրաֆիկ ստենտավորման>> անվանումը ունեցող ապրանքի տեխնիկական բնութագրերում ներառված <<մեդֆլյատոր>> անվանումով ապրանքը այն նույն ապրանքն է, որը պահանջվում է Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով, որ դրանք կիրառվում են միևնույն նպատակներով միևնույն վիրահատությունների ժամանակ, ինչով Պատվիրատուն ինքն է ապացուցում, որ դրանք հանդիսանում են գնման մեկ առարկա:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջների՝

«Հոդված 25. Գնումների բաժանման կամ խմբավորման և գնման առարկայի բնութագրերի փոփոխման անթույլատրելիությունը

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չաւիաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.»

<<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հաձնաժողովի կողմից գնման մեկ առարկա հանդիսացող <<մեդֆլյատոր» անվանումով ապրանքի պահանջը Հրավերի առանձին չափաբաժինների բաժանելը հակասում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջներին:»:

Ընկերությունը 09.02.2022թ.-ին ի լրումն ներկայացված բողոքի հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԳԲՔԱ-ԼՕ-2022/02» բողոքի և ի պատասխան <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից 20. 01. 2022թ. Ձեզ առաքված թիվ 21 գրության, լրացուցիչ կերպով հայանում եմ հետևյալը՝

«ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով պահանջվող «Անգիոգրաֆիկ ստենտավորման» անվանումը ունեցող ապրանքի տեխնիկական բնութագրերում ներառված առանձին բնութագրեր ունեցող գնման առարկա հանդիսացող «մեդֆյատոր» անվանումով ապրանքը, որը որպես այդպիսին պահանջվում էր նաև Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնով:

Համաձայն Հրավերի գնահատող հանձնաժողովի 2022թ. հունվարի 27-ի թիվ 2 որոշմամբ արված հայտարարության, Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով պահանջվող «Մեդֆլատոր» անվանումով ապրանքի մասով՝ որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հաղթող է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն (Ի լրումն-3, կից փ/թ թիվ 1, արված նշումները), որին Պատվիրատուն ափաջարկում է կնքել ապրանքների մատակարարման թիվ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02-Խ» պայմանագիրը (Ի լրումն-3, կից փ/թ թիվ 2, արված նշումները):»:

3. <u>«Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/458-2022 գրությամբ դիմել է «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 11.01.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 20.01.2022թ.-ին թիվ 21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 11.01.2022 թվականի N ԲՔԱ-ԼՕ/1/458-2022 գրության, Ձեզ ենք ներկայացնում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ-ի դիրքորոշումը: Տեղեկացնում ենք, որ 65 չափաբաժնում նշված անգիոգրաֆիկ ստենտավորման հավաքածուում առկա բոլոր գործիքները և պարագաները, ինչպես նաև մեդֆլատորը, ունեն իրենց տեխնիկական բնութագրերը: Անգիոգրաֆիկ ստենտավորման հավաքածուն նախատեսված է անգիոպլաստիկայի, պլանային և շտապ ստենտավորումներ կատարելու համար: Անգիոգրաֆիկ ստենտավորման հավաքածուի մեջ ներառված պահանջներում մեդֆլատոր անվանումով ապրանքի առկայությունը անրաժեշտ է հիվանդի կյանքին սպառնացող սուր դեպքերում ստենտավորում կատարելու ժամանակը կրճատելու համար: Այդ իսկ պատճառով, անգիոգրաֆիկ ստենտավորման հավաքածուի մեջ մեդֆլատոր անվանումով ապրանքի առկայությունը կարծում ենք նպատակահարմար է: Ելնելով այդ փաստից, կարծում ենք, որ մեդֆլատորի առկայությունը փաթեթում չի համարվում խախտում:

Առանձին մեդֆլատորները՝ 22 չափաբաժնով ներկայացված, օգտագործվում են ոչ հաճախակի, որոշակի դեպքերում, երբ ստենտավորման համար անհրաժեշտ է 2-րդ մեդֆլատոր:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 07.01.2022թ.-ին հայտարարվել է «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 22-րդ 65-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

- 22-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը սահմանվել է *«Ինվազիվ միջամտության օդի մղման սարք// Մեդֆլատոր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդամղիչ սարք կոմպլեկտ, որը բաղկացած է օդամղիչ սարքից սեղմակով, 20սս ներարկիչով, 30 բարել ճնշումով, եռուղի կատետեր, իգրեկ կոննեկտոր զսպանակային մեխանիզմով սեղմակ տիպի, վաների բռնիչ պտտելու համար, ինտրոդյուսերի փական, երկարացման ճկուն միացում եռուղիով, մետաղական ասեղով: Ֆորմատ՝ հատ: Արտադրող երկրի և ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: Նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 30 հատ:

- 65-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը սահմանվել է *«Անգեոգրաֆիկ ստենտավորման»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Անգեոգրաֆիկ ստենտավորման հավաքածու. նախատեսված է անգիոպլաստիկայի և ստենտավորման համար: Հավաքածուն ներառում է՝ ինֆլացիոն համակարգ մեդֆլյատոր - 1 հատ, արյունագել հեմոստատիկ փական Y Connector – 1 հատ, ախտորիչ -ուղղորդիչ կատետր Guidewire Emerald – 1 հատ, մանիֆոլդ հավաքածու երկարացուցիչներով - 1 հատ, պունկցիոն ասեղ – 1 հատ, Medline ներարկիչ Լուեր լոք 5 մլ + ասեղ 20G x 1.5'' - 1 հատ, ներարկիչ Լուեր լոք 10 մլ - 1հատ, ներարկիչ Լուեր լոք 20 մլ - 1հատ, ձեռնոց ստերիլ Medline N7,N7.5,N8 - 3 հատ, անգեոգրաֆիկ ծածկոցի հավաքածու (լրակազմը պարունակում է ստերիլ ծածկոց՝ երեք շերտանի ներծծող հատվածով և միակողմանի թափանցիկ պանելով 210x300սմ (73 GSM) նյութը վիսկոզ՝ 1 հատ (THREEFLEX) PE FILM 25 GSM + VISCOSE 28, ներծծվող հատվածը- SMS 43 g/m Op-Tape, գործիքների համար նախատեսված ծածկոց 100x150սմ (60 GSM) 1հատ (THREEFLEX) PE FILM 25 GSM + VISCOSE 28 GSM +PP 15 GSM + GLUE 2 GSM), վիրաբույժի խալաթ L չափսի կրկնակի պաշտպանվածությամբ 2 հատ (SMMS), ձեռքի սրբիչ (40x40սմ) ՝ կազմությունը Scrim Thread-3''x2''/square inch 2 հատ, ֆլյուրոսկոպի պոլիէթիլենային ծածկ 75x90սմ 1 հատ, սպունգ բետադինի համար ST 1հատ,թանզիֆե անձեռոցիկ (7,5x7,5 սմ) 8 շերտանոց 10 հատ, 1 հատ, պլաստիկ թաս 500CC, սկուտեղ՝ 1000 CC: Հիմանական քաշը - 65 GSM; (+/- 10%): Ստերիլիզացիան համապատասխան ETO EN 11135-1 ստանդարտին, պահպանման ժամկետը 5 տարի: Լրակազմը պետք է համապատասխանի CE no:2195-MED-1404008 հավաստագրին, վկայագրված SZUTEST A.S. /2195 կողմից, որակի ստուգման սերտիֆիկատ համաձայն EN ISO 13485, կատարողական բնութագիրը համաձայն EN 13795, բիոհամատեղելիության որակի ստուգումը համաձայն EN ISO 10993-1, որակի վերահսկողությունը ըստ EN ISO 9001:2015 ստանդարտի, հավաքածուն պետք է համապատասխանի 071851 -TSE-OI/OI*

ստանդարտին, արտադրական պրակտիկան համապատասխան՝ ISO 22716: 2007 (GW) ստանդարտին: Որակի և ծագման սերտիֆիկատների առկայություն:) - 1 հատ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: Նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 100 հատ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 11.01.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին

մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, և միևնույն ժամանակ, արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 07.01.2022թ.-ին հայտարարված «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 22-րդ և 65-րդ չափաբաժինների մասով սահմանվել է ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագիրը և նախատեսված ընդհանուր քանակը՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար անհատապես, արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի սահմանվել: Մասնավորապես՝ 22-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը սահմանվել է *«Ինվազիվ միջամտության օդի մղման սարք // Մեդֆլատոր»*, *իսկ* 65-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը սահմանվել է *«Անգեոգրաֆիկ ստենտավորման»* հավաքածու, որի տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Անգեոգրաֆիկ ստենտավորման հավաքածու. նախատեսված է անգիոպլաստիկայի և ստենտավորման համար: Հավաքածուն ներառում է՝ ինֆլացիոն համակարգ մեդֆլյատոր - 1 հատ, ...»:*

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների

օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն:

Սույն դեպքում, Օրենքի 25-րդ հոդվածի իմաստով Պատվիրատուն պետք է հիմնավորի առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված համապատասխանաբար դիրքորոշման ու բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից թույլ չի տրվել Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում:

Նախ՝ բողոքի քննության ընթացքում բողոքաբերի կողմից չներկայացվեց բավարար վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ 65-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված *«ինֆլացիոն համակարգ մեդֆլյատոր»* ապրանքատեսակը 22-րդ չափաբաժնում նշված *«Ինվազիվ միջամտության օդի մղման սարք// Մեդֆլատոր»* անվանումով նշված նույն ապրանքատեսակն է:

Երկրորդ՝ Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին 20.01.2022թ.-ին ներկայացված թիվ 21 գրությամբ հիմնավորվում է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորման անհրաժեշտությունը, այն է՝ անգիոգրաֆիկ ստենտավորման հավաքածուի մեջ ներառված պահանջներում մեդֆլատոր անվանումով ապրանքի առկայությունը անհրաժեշտ է հիվանդի կյանքին սպառնացող սուր դեպքերում ստենտավորում կատարելու ժամանակը կրճատելու համար: Իսկ Ընկերության կողմից Բողոքներ քննող անձին չներկայացվեց Պատվիրատուի վերոնշյալ հիմնավորումը հերքող որոշակի ապացույց:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Սույն դեպքում, որպես որոշակի ապացույց, Ընկերության կողմից չի ներկայացվել առողջապահական բնագավառում հատուկ մասնագիտական գիտելիքներով օժտված կառույցի կողմից տրված մասնագիտական կարծիք կամ եզրակացություն, որն էական նշանակություն ունի սույն գործի քննության համար:

Եվ վերջապես՝ բողոքի լրացմամբ նշված Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի խախտում Պատվիրատուի կողմից նույնպես թույլ չի տրվել, քանի որ արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի

կիրառումից խուսափելու նպատակով, որպիսի փաստական տվյալներ սույն գործի քննության ընթացքում ձեռք չբերվեցին: Ավելին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Պատվիրատուն գնում կատարելու ընթացակարգը հայտարարել է գնանշման հարցման մրցակցային ձևով, ինչպես հետևում է Ընթացակարգի հրավերի բովանդակությունից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը՝ 65-րդ չափաբաժնի մասով, ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 11.01.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/02 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**